

ստեղծը տարուած է տակաւին ուսմանը ներթերուլ ու շարժառիթներով, միւս կողմէն՝ կը քալէ խորհրդապաշտ քերթողութեան արուեստին ճամբով: Աւելցնենք, սակայն, թէ Մեծարենցի համար ուսմանը թիզմ կը նշանակէ նամանաւանդ Դուրեան⁵⁰, այսինքն բանաստեղծ մը՝ որ ուսմանը է ոչ թէ բառին ձեւային հասկացողութեամբ, այլ էութեամբ ինքնին՝ գոյացապաշտօրէն: Այլ խօսքով, Մեծարենց ուսմանը թիզմէն ետք դալով, չի հաւաքեր անկէ բերեղացած արձագանքներ, այլ կ'երթայ նոյնինքն ուսմանը մի ապրող կեդրոնին: Անկէ կ'առնէ մասնաւորապէս սիրանիւթն ու արտայայտչական ուժականութիւնը: Միաժամանակ կ'առնէ նաեւ իր առաջին քայլերը դէպի խորհրդապաշտութիւն: Որպէս քննադատական հարց, «Մարմնի վերք - Սրտի վերք»-ի եւ «Արեւագալ»-ի փորձառական շրջանին մէջ ենք տակաւին:

Տեսնենք, օրինակի համար, «Երգը»⁵¹: Սիրային նիւթով քերթուած մըն է, գերաւոր շրջագծով, որ կը զարգանայ միաժամանակ գեղեցիկ (1-2րդ տող) եւ ահազու (3-4րդ տող) բնութեան մը մէջ: Այս բնակարարին մէջ երգ մը, «խորհրդածուի լուրքեան մէջ գիշերին», կը ջանայ թաղել սրտին սիրային զգացումները: Այս հեռուոր եւ մութ երգը կարողութիւնն ունի ոչնչացնելու ամէն ինչ՝ նուազեցնելու լոյսը, լռեցնելու առուն, քնացնելու սուրբը՝

Մասնակցելով մարդուն երգին Սեւ Սուգի:

Կրնանք ըսել թէ «Երգը» քերթուած մըն է որ կը սկսի ուսմանը շունչով (լուսինը, առուն, սարսփազող ծառերը), բայց որ շուտով կ'անցնի խորհրդապաշտութեան. այդ երգը կը ջանայ թաղել սրտին «Սերերն»: Նշենք «Սերերն»-ի յուսակին մէջ «հեռուն, հեռուն» արդէն խորհրդապաշտներուն loins է, անոնց l'abas-ն⁵²: Գիշերային երգը է՝ «Փրփուր ծփանք ցաւի յորդ ակիքներուն» (8րդ տող), եւ վերջապէս, վերջին տողին մէջ

կը գտնենք «Սեւ Սուգ» ու գիտենք որ խորհրդապաշտ բանաստեղծութեան մէջ զլիսաբեր գործածութիւնը կը հաստատէ խորհուրդի մը, խորհրդանշանի մը սեւեռումը, այսինքն՝ իրողութեան մը կամ հոգեվիճակի մը բացարձակ սահմանումը՝ անջատուած ժամանակէն ու միջոցէն (կը բաւէ յիշել Պոտլէրի «Spleen»-ին Es-poir-ն ու Angoissee-ը):

Սիրային նիւթի վրայ է նաեւ «Մութիւն տակ»⁵⁴, որ յօրինման իր արուեստով կը միանայ «Երգը» քերթուածին: Հոս եւս ունինք սիրոյ առանձնացումը ահազու բնութեան դրկին, ինչ որ խկապէս ուսմանը սկզբնաւորութիւն մըն է: Առաջին քառյակի երրորդ տողին մէջ իսկ կը կարդանք «խորհրդագալ» բառը⁵⁵, թէեւ տիրողը նկարագրական է տակաւին: Բայց նոյնինքն բնութեան բանաստեղծին մէջ կը ստեղծուի հոգեվիճակ մը («կը ներարկէ երակներու դող մ'անշէջ», 7րդ տող), որմէ կը ծագի խորհրդածութիւնը («Եւ կ'ունենամ անդրադարձումը կեանքին», 9րդ տող), որ սակայն կ'արտայայտուի նմանութիւններով, յարաբերութիւններով, «correspondance»-ներով (10-12րդ, 13-14րդ տողեր): Բանաստեղծութեան այս կառուցումը քին, այն է՝ յաջորդական փոփոխութիւններով ներքին այս յառաջխաղացութեան (բնութիւն → հոգեվիճակ → խորհրդածութիւն) կը հանդիպինք նաեւ վերջինի քով (նոյն տարիներու հայ բանաստեղծութեան մէջ Տէրեանի եւ Ինտրայի քով): Եթէ նոյնիսկ «Մութիւն տակ» քերթուածին մէջ տիրող շէշտը տակաւին ուսմանը է, սակայն ձեւը արդէն իսկ բաժնուած է անկէ եւ կ'ընթանայ գրական ա'յլ ուղղութեամբ:

50. Ինչ որ յետոյ պիտի հաստատէ իր Պետրոս Դուրեան քերթուածին մէջ, ՀՊՀ էջ 203, ԳՑ 21, էջ 57:

51. ՀՊՀ էջ 178, ԳՑ 21, էջ 39:

52. Տէ'ս ծանօթ. 36:

53. Spitzer, էջ 47:

54. ՀՊՀ էջ 183, ԳՑ 21 էջ 43:

55. Երգին մէջ ունենք խորհրդածուի:

Սիրային քերթուած մըն է նաեւ «Մեր-ժում»⁵⁶, անտարակոյս Դուրեանական արձագանքներով, բայց նոր եւ աւելի բուռն թափով մը (Դժնէ «ոչ»ը քրքիր ինձի անտարբեր), ինչ որ անշուշտ կը զերպանցէ որոշ չափով պայմանական «Սեւ բաժակն այն քոյնի» ուսմանը մը՝ նացորդը: Ուրիշ սիրային քերթուած մըն է Փոշին եւս՝⁵⁷ բնորոշուած արտայայտութեան ուժգնութեամբ ու զօրաւորագոյն զգացողութեամբ, զրեթէ զայրացկոտ, որ կը յորդի արտայայտուած զգացումներէն: Օրինակի համար, այսպէս կը հըն-չեն 7-8րդ տողերը.

Սիրտըս յուզուած է, միտքս կը խոկայ
Նենգութիւններուդ, դաւերուդ անլուր:

Եւ եթէ երբեք ասոնք մտածել կու տան Դուրեանին, սակայն մեզի կը բերեն նաեւ սիրոյ ուսմանը ըմբռնումէն այլեւս կը տրուած գաղափարներ: Ի ս կ ա պ է ս «Դաւերդ անլուր» կը թուի թէ կրնայ դուրսիւն ունենալ Մեծարենցի՝ ընկերութեան (աշխարհին) մէջ եւ ո'չ Դուրեանին: Դուրեանի համար կ'ընդ կրնայ չսիրել, կամ սիրել ուրիշ մը. պատասխանատուն կ'ընդ կրնայ ճակատագիրը, ընդդիմադիր պիտի ըլլայ ճակատագիրը, ընդդիմադիր բախտը: Մեծարենցի համար միջոցեւ կ'ընդ կրնայ ոչ միայն անգութ ըլլալ, այլ նը կրնայ ոչ միայն անգութ ըլլալ, այլ կ'ընդ կրնայ նաեւ դաւել՝ կ'ընդ կրնայ ներքինացնել իր անգութը. այն ատեն պատասխանատուութիւնը պիտի դառնայ անձնական: Տարբերութիւնը, ընկերաբանօրէն, ակներեւ է: Դուրեանի մէջ ուսմանը հեթոտուհին Դուրեանի է որ ունինք, միջոցեւ Մեծարենցի պարապային՝ «La Belle Dame sans merci»-ն:

«Փոշին» քերթուածին կառուցումը քին կը տանի մեզ յատկանշականօրէն խորհրդապաշտական քերթուածներուն: Նախ հընդ կրնայ տակաւին քերթուածութիւն մը, եւ առաջ ունինք նկարագրութիւն մը, եւ այսինքն՝ սահմանումը շրջապատի մը, զերթեան մը վիճակին (1-3րդ տող), անշարժութեան զգացողութեամբ մը: Անշարժութեան զգացողութեամբ մը ներածու-սոր կը յաջորդէ շարժումի մը ներածու-թիւնը (4-6րդ տող) եւ ապա՝ պոռթկումը (7-8րդ տող): Այս կէ-հոգեվիճակի մը (13-14րդ տող):

տէն սկսած, քերթուածին շարունակութիւնը արդէն յատկանշականօրէն խորհրդապաշտականի կը վերածուի. խօսքը արտաքին եւ ներքին աշխարհներու տարբերուն (տրուած իրրեւ նմանութիւն) միջեւ դուրսիւն ունեցող կապերուն յայտնութեան եւ անոնց յարաբերութեան դըր-ուելուն մէջ է: Ունինք, «Եւ ինչպէս հովը կը քալէ արագ» (9րդ տող) ու «Արիւնքի-հանքիս հովն ալ անխնայ - պիտի ընդունի փոշին կեղծ սիրոյդ» (13-14րդ տող): Նը-չենք, թէ «Փոշին կեղծ սիրոյդ» խորհրդ-ապաշտական իւրապատուի դրոշմ մը ու-նի: Խորհրդապաշտութեան կը տանին մեզ մանաւանդ վերջին երկու տողերը.

Եւ ժպիտներուդ մէջէն պատրանուտ
Սիրտըս միշտ կ'անգուն պիտի բարձրանայ:

Հոս, մեր հայեցողութեամբ, «մէջէն» կը համապատասխանէ Փրանսացի խորհրդա-պաշտներու իւրապատուի à travers-ին, որ, ըստ Spitzer-ի, «Յոյց չի տար սահմանա-փակ միջոց մը, այլ միայն շեղակի շար-ժում մը»⁵⁸. Նոյնպէս «կ'անգուն» կը հա-մապատասխանէ Փրանսացի խորհրդա-պաշտներուն եզական debout-ին, որոնք, միշտ Spitzer-ի համաձայն, դայն կը դուր-ժածեն «արտայայտելու համար վիճակ մը՝ որ անշարժ է ու արձանային, անթեք եւ ուրուային»⁵⁹: Նշենք որ, եթէ Փրան-սացի խորհրդապաշտները կը դործածէին debout՝ արտայայտելու համար խաղաղ եւ քարային անշարժութիւնը, Մեծարենց արտայայտութիւնը կը զօրացնէ, դայն կը բնորոշէ «միշտ»ով, ու «պիտի բարձրա-նայ»ով՝ յստակօրէն դուրս կու դայ ժա-մանակէն (միշտ) բարձրացող շարժումով:

56. ՀՊՀ էջ 181, ԳՑ 21, էջ 41:

57. ՀՊՀ էջ 179, ԳՑ 21, էջ 40:

58. Spitzer, էջ 27. Հեղինակը կը մէջբերէ Régnier-էն «La petite maison à travers les grands arbres» եւ Maeterlinck-էն՝ «Mes désirs à travers mon âme»:

59. Spitzer, էջ 51: Օրինակները զլիսաւորաբար Régnier-էն են (օր. «Quelqu'un debout en elle et qui est ma Pensée»):

